## Վերապատրաստման դասընթաց «Կատարողական վարույթի մասին օրենք: Օրենքի գործնական կիրառումը, խնդրահարույց հարցեր» թեմայով

**08.04.2026 11:34**

***Հարգելի՛ փաստաբաններ,***

09.04.2026 թվականին, ժամը 18:30-21:30-ին ՀՀ փաստաբանների պալատը, ՀՀ փաստաբանների պալատի դահլիճում կազմակերպելու է վերապատրաստման դասընթաց **«Կատարողական վարույթի մասին օրենք: Օրենքի գործնական կիրառումը, խնդրահարույց հարցեր»** թեմայով:

***Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ մարզերում գործունեություն իրականացնող և բնակվող փաստաբանները, ինչպես նաև այն փաստաբանները, ովքեր գտնվում են ՀՀ սահմաններից դուրս, հրավիրված դասընթացին կարող են մասնակցել նաև հեռավար եղանակով, որի մասին գրանցման վերաբերյալ Ձեր նամակում պարտադիր անհրաժեշտ է նշել՝ գտնվելու /գործունեության/ վայրը***:

- Դասընթացը կվարեն փաստաբան Մինաս Մուրադյանը և ՀԿԱԾ Երևան քաղաքի ոչ գույքային բնույթի կատարողական վարույթների հատուկ բաժնի պետ Վարդան Մելիքբեկյանը,
- **Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ մինչև 09.04.2026թ. ժամը 12:00-ն՝ պատասխան նամակ ուղարկելով training.coordinator@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին, որտեղ անհրաժեշտ է նշել տվյալ դասընթացի թեման, Ձեր անուն, ազգանունը և արտոնագրի համարը,**
- **09.04.2026թ. ժամը 12:00-ից հետո և առանց դասընթացի թեմայի, անվան, ազգանվան, արտոնագրի համարի նշման, գրանցումները չեն հաշվարկվելու,**
- Դասընթացին մասնակցությունը կհաշվարկվի պարտադիր վերապատրաստման 4 (չորս) ակադեմիական ժամ:

**Ուշադրություն. Այն փաստաբանները, ովքեր կցանկան մասնակցել միայն մեկ օրվա կամ իրենց կողմից նախընտրելի օրվա դասընթացին, ապա դրա մասին անհրաժեշտ է նշել ձեր նամակում՝ նշելով հստակ օրը և մասնակցության ձևը:**

**Հեռավար դասընթացը կանցկացվի Google meet հավելվածի միջոցով, որի մասնակցության հրավերը կստանաք ձեր էլեկտրոնային փոստի հասցեին՝ գրանցվելուց հետո:**

**Միաժամանակ խնդրում ենք հարթակին միանալիս նշել Ձեր անունը, ազգանունը և արտոնագրի համարը՝ Ձեր մասնակցությունը հաշվառելու և հարթակում շփվելու համար:**

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })